ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2026 թ.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ Դ.ԽՈՒԴԱԹՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Խուդաթյան,

Ի կատարումն ՀՀ վարչապետի աշխատակազմի ղեկավարի 10.07.2026թ. թիվ 02/13.4/23828-2026 և Ձեր՝ 14.07.2026թ. թիվ ԴԽ/15.3/26822-2026 հանձարարականների հայտնում եմ, որ Լոռու մարզպետի աշխատակազմը հարցման 1-ին և 2-րդ կետերում նշված՝ Վանաձորի համայնքապետարանի, այլ պետական մարմինների կամ պաշտոնատար անձանց պատասխանատվության, ինչպես նաև վերջիններիս լիազորությունների բաշխման վերաբերյալ հարցերին իրավական գնահատական տալու իրավասություն չունի:

3-րդ հարցի վերաբերյալ հայտնում եմ, որ Լոռու մարզպետի աշխատակազմի կողմից Փամբակ գետի վրա առկա անցումների և նմանատիպ կառույցների ուսումնասիրություն կամ տեխնիկական գնահատում չի իրականացվել, քանի որ նշված գործառույթը չի բխում աշխատակազմի՝ օրենքով սահմանված լիազորություններից: Համայնքային ենթակայության օբյեկտների հաշվառման, պահպանման և անվտանգ շահագործման հարցերը գտնվում են համապատասխան տեղական ինքնակառավարման մարմնի իրավասությունների շրջանակում, իսկ ջրային համակարգի մաս կազմող կառույցներինը՝ ՀՀ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության Ջրային կոմիտեի լիազորությունների շրջանակում:

Ստորագրող
ԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ
1204920311

2026-07-15 17:22:26 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

Հարգանքով՝ Ա. ՄԿՐՏՉՅԱՆ

Կատ. Լ.Մաթոսյան
հեռ. /0322/ 4-31-99